ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար.

- «Ոսկերչություն» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության մասնագիտական մոդուլներ դասավանդող.
    - «Էլեկտրական շղթաների կառուցման հմտություններ» – 24 դասաժամ
    - «Արևային ջերմային կայանների բաղադրիչ հանգույցներ» – 14 դասաժամ
    - «Զոդման և եռակցման աշխատանքի կատարման հմտություններ» – 36 դասաժամ
- Ավագ վարպետ՝ 1 դրույք

Թափուր տեղերի համապատասխանության նկատմամբ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներն են.
ունենալ համապատասխան մասնագիտական կրթություն կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության առնվազն 4 տարվա փորձ:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի հունվարի 21-ից մինչև փետրվարի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի:
Մրցույթը տեղի կունենա փետրվարի 10-ին, ժամը 09-00-ին՝ «Ոսկերչություն» մասնագիտության վարպետի համար, ժամը 11:30-ին՝ «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության վարպետի համար, ժամը 13:00-ին՝ «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության վարպետի համար, ժամը 14:30-ին՝ «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության վարպետի համար, ժամը 16:00-ին՝ «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության մասնագիտական մոդուլներ դասավանդողի համար, ժամը 17:30-ին՝ ավագ վարպետի համար «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում:
Հասցե՝ ք. Գյումրի, «Անի» թաղամաս, 11 փողոց, 5/2 շենք:
Տեղեկությունների համար զանգահարել /0312/ 6-64-07 հեռախոսահամարով: